


Հաստատված է
«Տեխնիկական անվտանգության
ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

տնօրեն 
Վ. Ունտրոսյան
ստորագրություն

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱԿՈՐ ՕՐՅԵԿՏԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ № 940

ք. Երևան

06.04.2016թ.

Համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի, «Գեոթիմ» ՓԲԸ տնօրենի և «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի միջև 30.03.2016թ.-ին կնքված № 940 պայմանագրի՝ 01.04.2016թ.-ից մինչև 06.04.2016թ.-ը «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-տեխնիկական անվտանգության փորձաքննության մարզային վարչության պետ Խ.Բաբայանի կողմից տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկվեց «Գեոթիմ» ՓԲԸ-ի կողմից շահագործման նախապատրաստվող ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայր արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերը (փոփոխված):

Համաձայն նախագծային փաստաթղթերի նախատեսվում է շահագործել Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրը, որը գտնվում է ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի սահմանագլխին, Չանգեզուրի լեռնաշղթայի հյուսիս, հյուսիս-արևմտյան ճյուղավորումների ջրաբաժան մասում, Գորհայք բնակավայրից 6կմ հյուսիս արևմուտք և Կեչուտ գյուղից 9 կմ հարավ:

Հանքավայրը բաժանված է երեք տեղամասերի, որոնց պաշարները հաստատվել են ՀՀ ԷԲՊՆ ՕՀՊԳ-ի կողմից 16.09.2011թ. № 309 (Արտավազդես և Տիգրանես տեղամասեր) և 11.12.2013թ. № 360 (Էրատո տեղամաս) որոշումներով:

Սույն աշխատանքային նախագծով նախատեսվում է հանքավայրը շահագործել երկու բացահանքերով: Հանքավայրի ընդհանուր շահագործման ժամկետը ընդունված է 11 տարի: Բացահանքերի տարեկան արտադրողականությունը ըստ ապրանքային հանքաքարի ընդունված է 10մլն/տ:

Հանքավայրի շահագործումը նախատեսվում է կատարել բաց եղանակով՝ երկկողանի, ընդերկայնական ընթացքաշերտերով մշակման համակարգի կիրառմամբ, մակաբացման ապարները արտաքին, իսկ 5-րդ տարուց սկսած մասամբ ներքին լցակույտեր տեղափոխելով:

Ընտրված մշակման համակարգի պարամետրերը են.
- հանքաստիճանի բարձրությունը

- 10.0մ

-հանքաստիճանի թեքման անկյունը	
ա/ աշխատանքայինը	-65÷70°
բ/ վերջնական դիրքում	-50÷60°
գ/ բացահանքերի կողերի թեքման անկյունը	-33-46°
-աշխատանքային հրապարակի լայնությունը	- 30-40մ
-հանույթային աշխատանքների միջին տարեկան իջեցումը	
ա/ N 1 բացահանք	-40մ
բ/ N 1 բացահանք	-50մ

Մակաբացման ապարները հանքավայրում ներկայացված են բերվածքային և դատարկ (պարփակող) ապարներով: Բերվածքային մակաբացման ապարների հեռացումը նախատեսվում է կատարել առանց նախնական փխրեցման, իսկ ժայռային մակաբացման ապարները նախնական փխրեցումից հետո բուլդոզեր-էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրի միջոցով:

Արդյունահանման աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել հանքաքարի և պարփակող ապարներ նախնական փխրեցում: Նախնական փխրեցումը նախատեսվում է կատարել հորատապայթեցման աշխատանքների միջոցով հորատանցքային լիցքերի կիրառմամբ: Հորատանցքերի հորատումը նախատեսվում է կատարել 200մմ հորատման տրամագծով CAT-6240 մակնիշի հորատման հաստոցով: Բարդ ռելիեֆով տեղանքներում նախատեսվում է հորատանցքերը հորատել 102մմ հորատման տրամագծով CAT-5150C մակնիշի հորատման հաստոցով: Արտաչափ կտորների մանրեցումը և շենքերի վերացումը նախատեսվում է կատարել CAT-336 էքսկավատորի վրա տեղադրված H 160 D5 հիդրոմուրճով:

Պայթեցման աշխատանքները նախատեսվում է կատարել սեփական ուժերով համապատասխան լիզենզիայի առկայության դեպքում: Պայթեցման աշխատանքների ժամանակ որպես պայթուցիկ նյութ ընդունված ANFO, Գեոնիտ կամ այլ տեսակի պայթուցիկ նյութեր, իսկ որպես պայթեցման միջոց՝ ոչ էլեկտրական պայթեցման միջոցներ, էլեկտրաճաթիչներ: Նախագծում կատարված են հորատապայթեցման աշխատանքների պարամետրերի հաշվարկ, որոնք տիպային են, ուստի յուրաքանչյուր պայթեցման համար պետք է կազմվի հորատապայթեցման աշխատանքների անձնագիր ճշգրտված հաշվարկներով: Հորատանցքերի լիցքավորումը նախատեսվում է կատարել M3-3B-15 մակնիշի լիցքավորող մեքենայով: Նախագծով հաշվարկված են նաև պայթեցման աշխատանքների ժամանակ անվտանգ հեռավորությունները:

Լեռնային զանգվածի բարձումը ավտոինքնաթափերի մեջ նախատեսվում է կատարել 26մ³ շերտերի տարողությամբ ուղիղ բահով սարքավորված CAT-6050 մակնիշի էքսկավատորներով: Օժանդակ աշխատանքների համար էքսկավատորներին կցվում են CAT-994, CAT-966 մակնիշների միաշերտի անիվային բարձիչներ և CAT-D10T մակնիշի բուլդոզերներ:

Հանքաքարի տեղափոխումը 4.5կմ հեռավորության վրա գտնվող ջարդիչ-տեսակավորող կայանք նախատեսվում է իրականացնել 190տ բեռնատարողությամբ CAT-789 մակնիշի ավտոինքնաթափերի միջոցով, իսկ ջարդված հանքաքարի տեղափոխումը մինչև բեռնաթափման զետեղարան նախատեսվում է իրականացնել 1200մմ ժապավենի լայնությամբ և 3.5կմ երկարությամբ ժապավենային փոխակրիչի միջոցով, որտեղից էլ БелА37513 մակնիշի ինքնաթափերով այն տեղափոխվում է 1.0կմ հեռավորության վրա գտնվող տարրալուծման հրապարակ:

Լցակույտաառաջացումը նախատեսվում է կազմակերպել բացահանքի եզրագծից դուրս հյուսիս-արևմտյան մասում տեղադրված արտաքին լցակույտում, որի զբաղեցրած տարածքը կազմում է 140.69 հա, շեփի թեքման անկյունը 18°: 5-րդ տարվանից սկսած մակաբացման ապարները նախատեսվում է տեղափոխել N1 բացահանքի մշակված տարածք և արտաքին լցակույտ: Հողային շերտը նախատեսվում է պահեստավորել առանձին լցակույտում: Նախագծով նախատեսված է լցակույտաառաջացման բուլդոզերային եղանակը:


Նախագծում հաշվարկված են նաև օգտակար հանածոյի կորուստները և աղքատացումը, որոնք համապատասխանաբար կազմում են $V=2\%$, իսկ $U=2\%$:

Նախագծում առանձին բաժնով նախատեսված են նաև աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության միջոցառումներ:

Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերը համապատասխանում են տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության Տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկված «Գեոթիմ» ՓԲԸ-ի կողմից շահագործման նախապատրաստվող ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայր արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերը (փոփոխված) համապատասխանում են «Բաց եղանակով մշակվող օգտակար հանածոների հանքավայրերի անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 21.01.2010թ N-51-Ն որոշման պահանջներին և նախագծային փաստաթղթերին տրվում է տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն:

Փորձագիտական եզրակացությանը կցվող նյութեր՝

-արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի պատճենը 40 էջ:

Վարչության պետ  Խ.Բարսյան N 041
ստորագրություն, անուն, ազգանուն, վկայականի համարը